ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 2073-Լ	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Հրապարակվել է միասնական կայքում 19.12.2020	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	17.12.2020
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	18.12.2020
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	20.12.2020	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍՎԱԾՔ ԿԱՄ ԽԵՂՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2020 թվականի N 2073-Լ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍՎԱԾՔ ԿԱՄ ԽԵՂՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83-րդ հոդվածը և 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք կամ խեղում ստացած զինծառայողների աջակցության միջոցառումը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման իմաստով վնասվածք կամ խեղում ստացած զինծառայող է համարվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անձը, ում վրա տարածվում են Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի N 9 որոշման 9-17-րդ կետերի դրույթները կամ այն զինծառայողը, ով առողջական վիճակի պատճառով հանդիսանում է առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, սակայն դեռևս չի ճանաչվել Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի շահառու:

(2-րդ կետը լրաց. 18.02.21 N 206-Լ)

3. Սահմանել, որ սույն միջոցառման ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցները Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին է տրամադրում սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, 500,000.0 հազ. դրամի չափով, որից հետո՝ եռամսյա պարբերականությամբ՝

հիմք ընդունելով Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի ներկայացրած հաշվետվությունը սույն միջոցառման շրջանակներում կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

18.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 17-ի N 2073-Լ որոշման

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍՎԱԾՔ ԿԱՄ ԽԵՂՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք կամ խեղում ստացած զինծառայողներին (այսուհետ՝ շահառու): Շահառուի կողմից առողջական վիճակով պայմանավորված ամենամյա դրամական վճարն ստանալու անհնարինության դեպքում դրամական վճարը տրամադրվում է շահառուի ընտանիքի անդամներին՝ ամուսնուն կամ զավակին կամ ծնողին, որի վերաբերյալ նշված անձինք (առկայության դեպքում) ներկայացնում են համատեղ ստորագրված դիմում՝ դրամական վճարը նրանցից որևէ մեկի անունով բացված հաշվին փոխանցելու մասին:

(1-ին կետը լրաց. 29.04.21 N 660-Լ)

2. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է ամենամյա դրամական վճարի ձևով՝ Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) միջոցով, բայց ոչ ավելի, քան 6 ամսվա համար՝

1) ամսական 200000 դրամի չափով՝ հիմնադրամի խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի N 9 որոշման 9-րդ կետով սահմանված 100000 դրամ ստացող զինծառայողին.

2) ամսական 300000 դրամի չափով՝ այն զինծառայողին, ով առողջական վիճակի պատճառով հանդիսանում է առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, սակայն դեռևս չի ճանաչվել հիմնադրամի շահառու: Ընդ որում, եթե սույն ենթակետում նշված անձն ստացել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի N 90-Լ որոշմամբ նախատեսված միանվագ դրամական օգնությունը, ապա սույն ենթակետում նշված ամենամյա դրամական վճարը նվազեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի N 90-Լ որոշման համաձայն ստացված միանվագ դրամական օգնության չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար նվազեցնելով 100000 դրամի չափով: Նվազեցումը կատարվում է օգնությունն ստացած անձանց վերաբերյալ հիմնադրամին տրամադրված ցուցակներում նվազեցման վերաբերյալ նշումների հիման վրա:

(2-րդ կետը խմբ. 18.02.21 N 206-Լ, լրաց. 29.04.21 N 660-Լ)

3. ***(կետն ուժը կորցրել է 18.02.21 N 206-Լ)***

4. Ամենամյա դրամական վճարի տրամադրումը դադարեցվում է, եթե՝

1) վնասվածք կամ խեղում ստացած զինծառայողը ճանաչվել է հիմնադրամի շահառու, շահառու ճանաչվելու ամսվա 1-ից.

2) ամենամյա դրամական վճարը վճարվել է 6 ամսվա համար՝ 6-րդ ամսվան հաջորդող ամսվա 1-ից,

3) ամենամյա դրամական վճար տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվել են տեղեկություններ, որ զինծառայողը վնասվածքը կամ խեղումն ստացել է զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելու կամ դասալքության կամ կամովին գերի հանձնվելու կամ մարտադաշտն ինքնակամ լքելու հետևանքով:

5. Եթե ամենամյա դրամական վճարի տրամադրումը դադարեցվում է սույն հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա, ապա վճարված գումարները նվազեցվում են շահառուին հիմնադրամից վճարման ենթակա միանվագ գումարից:

6. Եթե ամենամյա դրամական վճարի տրամադրումը դադարեցվում է սույն հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի

հիման վրա, ապա վճարված գումարները շահառուից ետ չեն պահանջվում և դիտարկվում են որպես հիմնադրամի ծախս։

7. Եթե ամենամյա դրամական վճարի տրամադրումը դադարեցվում է սույն հավելվածի 4–րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա, ապա վճարված գումարները կարող են վերադարձվել զինծառայողի կամ այլ անձի կողմից կամ հիմնադրամի կողմից գանձվել դատական կարգով։

(հավելվածը խմբ., փոփ. 18.02.21 N 206-Լ, լրաց. 29.04.21 N 660-Լ)

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Է. Աղաջանյան